

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՈՒՍԱՆՈՂԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Մագիստրատուրա



ԵՐԵՎԱՆ 2011

ՀՏԳ 378(03) Տպագրության է երաշխավորվել Երևանի ճարտարապետության
ԳՄԳ 74.58g2 և շինարարության պետական համալսարանի գիտական
Կ 713 խորհրդի կողմից

Կոշկարյան Գ.Ն

Կ 713 Ուսանողի ուղեցույց: Մագիստրատուրա / Գ.Ն. Կոշկարյան, Ա.Վ. Մարտիրոսյան; ՀՀ ԿԳՆ, ԵՃՇՊՀ.-Եր.: Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան, 2011.-32 էջ:

Գրախոս՝ տ.գ.թ., դոցենտ Ե.Վ. Վարդանյան

Ուղեցույցում ներկայացվում են Բոլոնիայի գործընթացի նպատակները, խնդիրները, զարգացումները:

Բերվում են մագիստրոսական կրթական աստիճանում ուսումնական գործընթացի կազմակերպման, ուսանողների ձեռք բերած գիտելիքների գնահատման, գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման ու անցկացման, ինչպես նաև ավարտական աշխատանքի կառուցվածքի, ձևակերպման ու պաշտպանության պահանջները:

Ուղեցույցի նպատակը ուսանողության իրազեկման մակարդակի բարձրացումն է:

ՀՏԳ 378(03)

ԳՄԳ 74.58g2

ISBN 978-9939-63-087-8

© Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն -----	5
2. Ուսումնական գործընթացի կազմակերպում -----	11
3. Ուսանողի գիտելիքների գնահատում -----	15
4. Արտադրական պրակտիկա -----	16
5. Նախաավարտական պրակտիկա -----	17
6. Գիտահետազոտական աշխատանք -----	17
7. Ավարտական աշխատանք -----	19
8. Գրականություն -----	23
Հավելված 1. Բոլոնիայի գործընթացի մասնակից երկրներ -----	24
Հավելված 2. Մագիստրոսական կրթական աստիճանի աշխատանքային ուսումնական պլան («271500 – Ճարտարապետություն և դիզայն» մասնագիտություն) -----	25
Հավելված 3. Մագիստրոսական կրթական աստիճանի աշխատանքային ուսումնական պլան («270100 – Շինարարություն, շինարարական իրերի և կառուցվածքների արտադրություն» մասնագիտություն) -----	26
Հավելված 4. Հետազոտական (ասպիրանտական) կրթական աստիճանի աշխատանքային ուսումնական պլան («ԺԸ.00.01- Ճարտարապետություն» մասնագիտություն) -----	27
Հավելված 5. Հետազոտական (ասպիրանտական) կրթական աստիճանի աշխատանքային ուսումնական պլան («Ե.23.00- Շինարարություն» մասնագիտություն) -----	28
Հավելված 6. Մագիստրոսական կրթական ծրագրի ուսումնական գործընթացի ժամանակացույց («270100 – Շինարարություն, շինարարական իրերի և կառուցվածքների արտադրություն» մասնագիտություն) -----	29
Հավելված 7. Ուսանողի առաջադիմության գնահատման որոշ համակարգերի անցումային աղյուսակ -----	30

«Հիմք ընդունելով հարուստ և բազմազան եվրոպական մշակութային ժառանգությունը՝ մենք ստեղծում ենք Եվրոպական բարձրագույն կրթության տարածք, որի հիմքում ընկած են հաստատությունեական (ինստիտուցիոնալ) անկախությունը, ակադեմիական ազատությունը, հավասար հնարավորությունները և դեմոկրատական սկզբունքները, որը կխթանի շարժունությանը, կավելացնի աշխատունակությունը և կամրապնդի Եվրոպայի գրավչությունն ու մրցակցությունը»:

Բոլոնիայի գործընթացի մասնակից երկրների բարձրագույն
կրթության համար պատասխանատու նախարարներ

Լոնդոնի կոմյունիկե

2007թ., մայիս

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բոլոնիայի գործընթացը՝ որպես միջպետական պայմանագիր, սկիզբ է դրվել 1999թ., երբ Եվրոմիության 29 երկրների կրթության նախարարները, հանդիպելով Բոլոնիայում, ստորագրեցին հիմնադիր հռչակագիր (Հայաստանի Հանրապետությունը հռչակագրին միացել է 2005 թվականին): Համաձայն հռչակագրի պահանջների՝ բոլոր մասնակիցները հայտնել են իրենց երկրների պատրաստակամությունը՝ հիմնովին բարեփոխել բարձրագույն կրթության համակարգը և այն համապատասխանեցնել Բոլոնիայի հենքով սահմանված չափայնություններին [1]:

Հիմնադիր հռչակագրում ամրագրվել է նաև, որ բոլոր բարեփոխումները պետք է իրականացվեն մինչև Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի (ԵԲԿՏ) ձևավորման պաշտոնական սահմանված ժամկետը՝ 2010 թվականը:

Համաձայն Բոլոնիայի հիմնադիր հռչակագրի՝ ԵԲԿՏ-ն պատկերացվում է որպես մի բաց տարածք, որում ուսանողներին, շրջանավարտներին և բարձրագույն կրթության աշխատողներին հնարավորություն է ընձեռվում անարգել շարժունության և հավասարապես մատչելի բարձրորակ բարձրագույն կրթության համար: Նման բաց տարածքի անկյունաքարերն են բարձրագույն կրթության որակավորումների փոխճանաչումը, թափանցիկությունը և եվրոպական համագործակցությունը որակի ապահովման ասպարեզում:

Ներկայումս Բոլոնիայի գործընթացում ընդգրկված են Եվրոպայի ու Ասիայի 46 անդամ, 4 անդամության թեկնածու, ինչպես նաև Կենտրոնական ու Միջին Ասիայի 12 գործընկեր երկրներ (հավելված 1):

Հատկանշական է, որ Բոլոնիայի գործընթացը չի կառավարվում Եվրոհանձնաժողովի կողմից, և որոշումներն այստեղ ընդունվում են մասնակից բոլոր երկրների համահամաձայնության սկզբունքի հիման վրա՝ յուրաքանչյուր երկու տարին մեկ հրավիրվող կրթության նախարարների գագաթնաժողովներում [2]:

Վերջին 2-3 տարիներին զգալիորեն բարձրացել է ՀՀ բուհական համակարգի ներգրավվածության աստիճանը Բոլոնիայի գործընթացում: Դրանում զգալի դեր

ունի նաև ՀՀ կառավարությունը, որի կողմից ընդունվել են կարևորագույն որոշումներ, ինչպես նաև ստեղծվել են մի շարք հիմնադրամներ, կենտրոններ և գրասենյակներ, այդ թվում.

- ✓ Որակի ապահովման ազգային կենտրոն՝ ՈԱԱԿ հիմնադրամը (ANQA),
- ✓ Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնը՝ ԱՓՇԱՏԿ (ArmEnic),
- ✓ TEMPUS հայաստանյան գրասենյակը,
- ✓ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամ-Հայաստանը,
- ✓ Կրթության ազգային ինստիտուտը,
- ✓ Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոնը՝ ԲԿՌ-ՀԱԿ,
- ✓ «Կրթական ծրագրերի կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակը (ԾԻԳ) և այլն:

Այս կազմակերպությունները ոչ միայն համակարգում են բարձրագույն և հետբուհական կրթության բարեփոխումների ընթացքը Հայաստանում, այլև ապահովում են բարձրագույն կրթության Եվրոպական հիմնարար սկզբունքների և ՀՀ բարձրագույն կրթության համակարգի համադրելիությունը:

Օրենսդրորեն ՀՀ կրթական համակարգում կատարվել են արմատական բարեփոխումներ. փոփոխվել են վարչական կառավարումը, ուսումնական պլանները, ուսուցման և գնահատման մեթոդները, որոնք համապատասխանեցվել են Բոլոնիայի հռչակագրին և Եվրոմիության հայտարարություններին [3]:

Մասնավորապես, մասնագիտական ուսումնական հաստատություններում.

- ներդրվել է դյուրընթեռնելի և համադրելի աստիճանային համակարգ,
- ընդունվել է բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի (ասպիրանտի) կրթական երեք ծրագրերի (աստիճանների) վրա հիմնված բարձրագույն կրթության համակարգ,

- գործում է կրեդիտների կուտակման և փոխանցման ուսուցման եվրոպական համակարգ (ECTS),

- իրականացվում է ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի միջազգային շարժունություն,

- ներդրվել են բարձրագույն կրթության Եվրոպական չափանիշներ և չափորոշիչներ,

- գործում է կրթության որակի ապահովման համակարգ,

- ընդունվել է հարատև կրթության այլընտրանքային ձև,

- դասախոսները և ուսանողները դիտվում են որպես գործընկերներ,

- բարձրացել է հետաքրքրությունը Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի՝ ԵԲԿՏ-ի հանդեպ և այլն:

ՀՀ բարձրագույն կրթության համակարգի կարևորագույն խնդիրների շարքին են դասվում.

1. ապագա հաջող կարիերայի համար ուսանողների նախապատրաստումը և նրանց անհատական զարգացման ապահովումը,

2. ուսանողների՝ որպես ժողովրդավարական հասարակության ակտիվ քաղաքացիներ դաստիարակումը,

3. գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների լայն շրջանակի ներգրավվածության ապահովումը,

4. ՄՈՒՀ-ի կառավարման և ուսումնական գործընթացներում ուսանողության դերի բարձրացումը:

Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանում (ԵՃՇՊՀ) բարձրագույն կրթության վերը նշված եռաստիճան կրեդիտային համակարգն ընդգրկում է.

1-ին աստիճան՝ բակալավրիատ. 240 կրեդիտ.

- առկա՝ 4 տարի,

- հեռակա՝ 5 տարի:

2-րդ աստիճան՝ մագիստրատուրա. 120 կրեդիտ.

- առկա՝ 2 տարի,
- հեռակա՝ 2,5 տարի:

3-րդ աստիճան՝ ասպիրանտուրա
(հետբուհական).

180 կրեդիտ.

- առկա՝ 3 տարի,
- հեռակա՝ 4 տարի:

ԵՃՇՊ համալսարանն իրականացնում է.

1. Բակալավրական կրթական ծրագրեր 9 ֆակուլտետներում՝ ՀՀ կառավարության կողմից 2007թ. օգոստոսի 30-ի N°1038-Ն որոշմամբ հաստատված ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկի հետևյալ 22 մասնագիտությունների գծով.

✓ *Ճարտարապետության և դիզայնի ֆակուլտետ*

«271500 - Ճարտարապետություն և դիզայն»

✓ *Դիզայնի և համակարգչային նախագծման ֆակուլտետ*

«070900 - Դիզայն»

«071800 – Համակարգչային գեղարվեստական նախագծում»

✓ *Կիրառական արվեստի և պատմամշակութային տուրիզմի ֆակուլտետ*

«031700 - Գեղեցիկ արվեստ»

✓ *Արդյունաբերական և քաղաքացիական շինարարության ֆակուլտետ*

«270100 – Շինարարություն, շինարարական իրերի և կառուցվածքների արտադրություն»

«271100 – Շենքերի նախագծում»

«280700 - Անվտանգությունն արտակարգ իրավիճակներում»

✓ *Հիդրոտեխնիկայի և քաղաքային տնտեսության ֆակուլտետ*

«270300 – Ջրային համակարգերի շինարարություն և շահագործում»

«270400 – Քաղաքային տնտեսություն և ջերմագազամատակարարում»

✓ *Տրանսպորտի ֆակուլտետ*

«190200 – Տրանսպորտային ուղիների, միջոցների շինարարություն, կառավարում և դրանց շահագործում»

«190300 – Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում»

✓ *Հաշվողական տեխնիկայի և կառավարման ֆակուլտետ*

«230100 – Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա»

«081300 – Կառավարման տեղեկատվական համակարգեր»

«271200 - Անշարժ գույքի փորձաքննություն և կառավարում»

✓ *Տնտեսագիտության ֆակուլտետ*

«080600(1) – Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում»
(շինարարության ճյուղում)

«080600(2) – Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում»
(քաղաքային տնտեսության, բնակարանային և կոմունալ ծառայության ճյուղում)

«080600(3) – Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում»
(տրանսպորտի ճյուղում)

«081000 - Բնօգտագործման տնտեսագիտություն»

«081500 – Հաշվապահական հաշվառում» (շինարարության ճյուղում)

✓ *Կադաստրի և էկոլոգիայի ֆակուլտետ*

«271400 – Կադաստր և կիրառական գեոդեզիա»

«280500 - Բնապահպանական փորձաքննություն»

«280400 – Շրջակա միջավայրի պահպանություն և բնական պաշարների արդյունավետ օգտագործում» (ըստ ճյուղերի)

2. Մագիստրոսական կրթական ծրագրեր 20 մասնագիտությունների գծով.

- «271500 - Ճարտարապետություն և դիզայն»
- «071800 – Համակարգչային գեղարվեստական նախագծում»
- «070900 - Գիզայն»
- «031700 - Գեղեցիկ արվեստ»
- «230100 – Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա»
- «081300 – Կառավարման տեղեկատվական համակարգեր»
- «270100 – Շինարարություն, շինարարական իրերի և կառուցվածքների արտադրություն»
- «271100 – Շենքերի նախագծում»
- «271400 – Կադաստր և կիրառական գեոդեզիա»
- «080600 – Չեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում»
(ըստ ճյուղերի)
- «081000 - Բնօգտագործման տնտեսագիտություն»
- «081500 – Հաշվապահական հաշվառում» (ըստ ճյուղերի)
- «271200 - Անշարժ գույքի փորձաքննություն և կառավարում»
- «270300 – Ջրային համակարգերի շինարարություն և շահագործում»
- «270400 – Քաղաքային տնտեսություն և ջերմագազամատակարարում»
- «280700 - Անվտանգությունն արտակարգ իրավիճակներում»
- «280500 - Բնապահպանական փորձաքննություն»
- «280400 – Շրջակա միջավայրի պահպանություն և բնական պաշարների արդյունավետ օգտագործում» (ըստ ճյուղերի)
- «190200 – Տրանսպորտային ուղիների, միջոցների շինարարություն, կառավարում և դրանց շահագործում»
- «190300 – Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում»

3. Հետազոտողական (ասպիրանտական) կրթական ծրագրեր՝ 7 մասնագիտությունների գծով.

«ԺԸ.00.01 - Ճարտարապետություն»

«Ե.23.01 – Շինարարական կոնստրուկցիաներ, շենքեր, կառուցվածքներ
և շինարարական նյութեր»

«Ե.23.02 – Քաղաքացիական, արդյունաբերական, հիդրոտեխնիկական,
տրանսպորտային և ստորգետնյա շինարարություն»

«Ե.23.03 – Շենքերի և կառույցների ճարտարագիտական (էներգետիկ,
հիդրավիլիկական և այլն) ապահովում»

«Ե.23.04 – Շինարարական մեխանիկա»

«Ե.23.05 – Ջրատնտեսական համակարգեր և դրանց շահագործում»

«Ե.23.06 – Գեոդեզիա, ներառյալ քարտեզագրություն և կադաստր»

2. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Աշխատանքային ուսումնական պլան: Ուսումնառության ողջ ժամանակաշրջանի համար (բակալավրիատ՝ 4, մագիստրատուրա՝ 2, ասպիրանտուրա՝ 3 տարի) ուսումնական գործընթացի կազմակերպման և արդյունավետության գնահատման հիմնական փաստաթուղթը հանդիսանում է Համալսարանի Գիտական խորհրդի կողմից հաստատված աշխատանքային ուսումնական պլանը (հավելվածներ՝ 2, 3, 4, 5):

Աշխատանքային ուսումնական պլանը կազմելիս հաշվի են առնում ոչ միայն յուրաքանչյուր դասընթացի (առարկայի) գործնական նշանակությունը, կարգավիճակը, ուսումնական պլանի մոդուլային կառուցվածքի պահանջները, այլև մանրակրկիտ դիտարկում են յուրաքանչյուր դասընթացի (առարկայի) դերը շրջանավարտի մասնագիտական կոմպետենցիաների ձևավորման գործում:

Աշխատանքային ուսումնական պլանն ընդգրկում է կոնկրետ տեղեկություններ, այդ թվում.

- Կրթական ծրագրի մասնագիտության անվանումը: Նշվում են.
 - ուսումնառության ժամկետները. կիսամյակները, կիսամյակներում՝ ուսուցման շաբաթների քանակը,
 - աշխատանքային ուսումնական պլանի հաստատման ամսաթիվը,
 - ուսումնառության ավարտին տրվող մասնագիտական որակավորումը:
- Դասընթացները (առարկաները): Նշվում են.
 - բաղադրիչները (կրթամասերը) և անվանումները,
 - բաշխումն ըստ բաղադրիչների (կրթամասերի) հանրապետական, պարտադիր, ընտրովի, մասնագիտական,
 - ուսումնառության տարիները, կիսամյակները և շաբաթական լսարանային ժամերը,
 - ուսումնական պարապմունքների տեսակները և ստուգման ձևերը:
- Կրեդիտների քանակն ըստ.
 - բաղադրիչների, դասընթացների (առարկաների), պրակտիկաների, ավարտական աշխատանքի,
 - կիսամյակների և ընդհանուր ուսումնառության ժամկետի,
- Ուսանողի ուսումնական աշխատանքի ծավալը (ժամերով) ըստ.
 - պարապմունքի տեսակի. դասախոսություն, գործնական և լաբորատոր,
 - աշխատանքի ձևի. լսարանային, ինքնուրույն, գիտահետազոտական և ղեկավարի հետ անհատական պարապմունք,
 - դասընթացների (առարկաների), պարապմունքի տեսակի և աշխատանքի ձևի:
- Ուսումնական գործընթացի ժամանակացույցը: Նշվում են.
 - ուսումնառության ժամկետները (տարիները, կիսամյակները և շաբաթները),
 - ստուգարքների և քննությունների դասընթացները (առարկաները), ընդհանուր քանակը և կիսամյակները,


- կուրսային նախագծերի/աշխատանքների դասընթացը (առարկան), կատարման կիսամյակը, քանակը,

- արտադրական և նախաավարտական պրակտիկաների անցկացման ժամկետներն ու տևողությունը:

Աշխատանքային ուսումնական պլանում դասընթացների (առարկանների) և ուսումնական աշխատանքների ծավալն ու աշխատատարությունը ներկայացվում են ուսումնական ժամերով և կրեդիտներով:


Կրթական ծրագրի մասնագիտությունից կախված ուսուցման բաղադրիչներում դասընթացների (առարկանների), ուսումնական ժամերի և կրեդիտների բաշխումը կարող է լինել տարբեր:

Նկ. 1-ում բերվում են մագիստրոսական կրթական ծրագրի ուսուցման բաղադրիչները՝ «270100 – Շինարարություն, շինարարական իրերի և կառուցվածքների արտադրություն» մասնագիտության համար:



*Նկ. 1. Մագիստրոսական կրթական ծրագրի ուսուցման բաղադրիչները
(«270100 – Շինարարություն, շինարարական իրերի և կառուցվածքների արտադրություն»
մասնագիտության համար)*

Նկ. 2-ում բերվում են մագիստրական կրթական ծրագրի կրեդիտների բաշխումն ըստ ուսուցման բաղադրիչների՝ «270100 – Շինարարություն, շինարարական իրերի և կառուցվածքների արտադրություն» մասնագիտության համար:



Նկ. 2. Մագիստրոսական կրթական ծրագրի կրեդիտների բաշխումն ըստ ուսուցման բաղադրիչների (դասընթացների) («270100 – Շինարարություն, շինարարական իրերի և կառուցվածքների արտադրություն» մասնագիտության համար)

Մագիստրոսի կրթական ծրագրի ուսումնական գործընթացը կազմակերպվում է յուրաքանչյուր ուսումնական տարում երկու կիսամյակներով՝ աշնանային և գարնանային: Ուսումնառության ողջ ժամանակաշրջանում այն կազմում է ընդհանուրը՝ 90 շաբաթ, որից.

- տեսական ուսուցում՝ 48,
- քննությունների հանձնում՝ 10,
- արտադրական պրակտիկա՝ 1,
- նախաավարտական պրակտիկա՝ 1,
- ավարտական աշխատանքի կատարում՝ 16,
- արձակուրդ՝ 14 շաբաթ:

Մագիստրոսի որակավորում ստանալու համար ուսանողից պահանջվում է կանոնավոր հաճախել աշխատանքային ուսումնական պլանում ընդգրկված դասընթացների (առարկաների) ուսումնական պարապմունքներին, ժամանակին կատարել բոլոր տեսակի ուսումնական աշխատանքները (կուրսային նախագծեր/աշխատանքներ, պրակտիկաներ, անհատական պարապմունքներ դեկավարի հետ, գիտահետազոտական աշխատանք, ավարտական աշխատանք և այլն) և հաջողությամբ վաստակել 120 կրեդիտ:

Ուսանողն ամբողջությամբ պատասխանատու է բոլոր տեսակի ուսումնական աշխատանքների, ստուգարքների, քննությունների և դասընթացի (առարկայի) այլ պահանջների լիարժեք կատարման համար:

Հավելված 6-ում բերվում է մագիստրոսական կրթական ծրագրի ուսումնական գործընթացի ժամանակացույցի օրինակ՝ «270100 – Շինարարություն, շինարարական իրերի և կառուցվածքների արտադրություն» մասնագիտության համար:

3. ՈՒՍԱՆՈՂԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ուսանողի ուսումնառության արդյունքների և գիտելիքների գնահատման համար կիրառվում է տառային գնահատականների չորս միավորանոց սանդղակ՝ A (գերազանց), B (լավ), C (բավարար), D (անբավարար), F (կտրված կամ չներկայացած), J (թերի կամ անավարտ):

Որոշ դասընթացներից (առարկաներից) ուսանողները գնահատվում են. S (ստուգված) և U (չստուգված):

Տարբերակման ավելի մեծ ճշտության դեպքում A, B և C գնահատականներին կցվում են (+) կամ (-) նշաններ, որոնք բաձրացնում կամ իջեցնում են գնահատականը:

Տառային գնահատականներին համապատասխանում են հետևյալ թվանշանները. A=5, B=4, C=3, D=2, F=0:

A, B կամ C գնահատականներին կից (+) կամ (-) նշանները տառի թվային արժեքը համապատասխանաբար բարձրացնում կամ իջեցնում են 0,3 միավորով:

Սա չի վերաբերում A^+ գնահատականին, որի թվային արժեքը 4,0 է:

S և U գնահատականները թվային արժեք չունեն:

Այն դասընթացներից (առարկաներից), որոնցից ուսանողը ստացել է D, F կամ U գնահատականներ, կրեդիտներ չեն տրվում:

Դասընթացի բացթողման դեպքում նշանակվում է W:

Հավելված 7-ում բերվում են դասընթացի (առարկայի) յուրացման որակի գնահատման՝ հինգ միավորանոց, Եվրոպական կրեդիտային, ինչպես նաև Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանում կիրառվող 20 միավորանոց համակարգերը [4]:

4. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ

Ուսումնառության առաջին տարվա երկրորդ կիսամյակում ուսումնական գործընթացի ժամանակացույցով (հավելված 6) նախատեսվում է արտադրական պրակտիկա: Արտադրական պրակտիկան անցկացվում է արտադրական ձեռնարկությունում:

Ուսանողն այդ ժամանակաշրջանում, իր ավարտական աշխատանքի թեմայի խնդիրների շրջանակներում, ծանոթանում է ձեռնարկության գործունեությանը, արտադրական գործընթացների իրականացման տեխնոլոգիական փուլերին, լրացնում է արտադրական պրակտիկայի անցկացման հաստատված ձևի մատյան և կազմում հաշվետվություն:

Հաշվետվությունում մանրամասն նկարագրվում են տվյալ ձեռնարկությունում իրականացվող մասնագիտական արտադրական գործունեության խնդիրները և դրանց բովանդակությունը:

5. ՆԱԽԱԱՎԱՐՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ

Ուսումնառության երրորդ կիսամյակում, ավարտական աշխատանք կատարելու համար, ուսանողն անցնում է մեկ շաբաթ տևողությամբ նախաավարտական պրակտիկա:

Նախաավարտական պրակտիկայի ընթացքում ուսանողն իր թեմային առընչվող խնդիրների շրջանակներում հավաքագրում է տվյալներ, նյութեր, որոնք անհրաժեշտ են լինելու հետագայում՝ ավարտական աշխատանքի կատարման ընթացքում: Գրանք կարող են լինել տեսական հետազոտությունների և փորձարարական, նախագծային ու չափագրական աշխատանքների արդյուքներ և այլ նյութեր:

Ուսանողը նախքան նախաավարտական պրակտիկա անցնելը, խորհրդակցելով իր ղեկավարի հետ, հստակեցնում է կատարվելիք աշխատանքների բովանդակությունը, ծավալը և ժամկետները:

Նախաավարտական պրակտիկայի ավարտին ուսանողը կազմում է հաշվետվություն, որը ներկայացնում է մասնագիտական ամբիոն՝ պաշտպանության:

Նախաավարտական պրակտիկայի հաշվետվության հաջող պաշտպանության արդյունքում ուսանողը ստանում է սահմանված կրեդիտների քանակ:

6. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Աշխատանքային ուսումնական պլանի համաձայն երկրորդ ուսումնական տարում (3-րդ և 4-րդ կիսամյակներ) ուսանողը կատարում է գիտահետազոտական աշխատանք: Այդ նպատակով ուսանողը գիտական թեմայի խնդիրների շրջանակներում կատարում է գրականության ակնարկ՝ օգտվելով տեղեկատվության ժամանակակից միջոցներից:

Գիտահետազոտական աշխատանքի նպատակը, մասնագիտական ամբիոնի համապատասխան գիտական որակավորում ունեցող դասախոսի ղեկավարությամբ

յամբ, ուսանողի ինքնուրույն հետազոտական աշխատանք կատարելու ունակության ձեռք բերումն է:

Գիտահետազոտական աշխատանքում.

✓ բերվում է ուսումնասիրվող բնագավառի հիմնահարցերից մեկին վերաբերվող հակիրճ ակնարկային հետազոտություն, որով և բացահայտվում է ուսանողի տեսական գիտելիքների մակարդակը, խնդիրներ առաջադրելու ունակությունը և գործնական կարողությունները,

✓ ներկայացվող նյութը շարադրվում է տրամաբանված, հստակ, շարադրմանը ներկայացվող պահանջներին համապատասխան և հավաստի փաստերի վրա հիմնավորված,

✓ արտացոլվում է ուսանողի ունակությունը՝ տեղեկատվության որոնման, ընտրության, օգտագործման և համակարգման խնդիրներում, ինչպես նաև երևում է տվյալների մշակման արդի մեթոդներին տիրապետելու նրա իմացությունը,

✓ անհրաժեշտ ձևավորումները կատարվում են հրատարակչության գործող նորմատիվային պահանջներին համապատասխան:

Ուսումնառության առաջին ամսում ուսանողը ստանում է ամբիոնի կողմից ներկայացված և համալսարանի գիտական խորհրդում հաստատված գիտական թեմա, որի մանրակրկիտ ուսումնասիրման հիման վրա վեր հանված խնդիրների հետազոտության արդյունքներով (հիմնականում ուսումնառության երկրորդ տարում) պատրաստում և տպագրության է հանձնում գիտական հոդված(ներ)՝ համալսարանի կամ այլ գիտական ժողովածուներում, ինչպես նաև ներկայացնում է զեկուցումներ՝ պարբերաբար հրավիրվող տեղական, համալսարանական և միջազգային գիտաժողովներում:

Գիտահետազոտական աշխատանքի ծավալը սովորաբար կազմում է 25-30 համակարգչային էջ: Անհրաժեշտության դեպքում դրանում պետք է ներկայացվեն անհրաժեշտ աղյուսակներ, նկարներ, գծագրական սխեմաներ, պատկերներ, հավելվածներ և այլն:

7. ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Շրջանավարտի ավարտական աշխատանքի կատարումը հանդիսանում է համալսարանում ուսանողի ուսուցման ավարտական փուլ, որի նպատակն է.

- համակարգել, ամրացնել և ընդլայնել համալսարանում ձեռք բերած մասնագիտական տեսական գիտելիքները և կիրառել գիտական, տեխնիկական, տնտեսական և արտադրական կենկրետ խնդիրների կատարման ժամանակ,

- զարգացնել աշխատանքները ինքնուրույն կատարելու ունակությունները և տիրապետել առաջադրված խնդիրների և հարցերի լուծման համար անհրաժեշտ հետազոտություններ և փորձարկումներ իրականացնելու մեթոդիկային,

- գիտության, տեխնիկայի և արտադրության, ժամանակակից պայմաններում խթանել ինքնուրույն որոշումներ կայացնող մասնագետների պատրաստմանը:

Ուսանողն ուսումնառության առաջին ամսում ստանում է ավարտական աշխատանքի թեմա, որի շրջանակներում ուսումնառության ողջ ժամանակաշրջանում իրականացնում է տարաբնույթ գիտահետազոտական (տեսական, փորձարարական, չափագրական, ռեֆերատիվ, վերլուծական և այլ) աշխատանքներ:

Որպես ավարտական աշխատանքի առանձին բաժիններ կարող են հանդիսանալ գիտահետազոտական աշխատանքի նյութերը, կատարված կուրսային նախագծերը/աշխատանքները, ինչպես նաև ղեկավարի անմիջական հսկողության տակ կատարված այլ բնույթի նախագծային ու հետազոտական աշխատանքները, որոնք անմիջականորեն առնչվում են տվյալ ավարտական աշխատանքի խնդիրներին:

Ավարտական աշխատանքի կատարման ժամանակ, ուսանողը.

- օգտագործում է ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքները,
- ցուցաբերում է առաջադրված ինժեներական խնդիրները ինքնուրույնաբար լուծելու ունակություն,

- կիրառում է հաղորդակցման և տեղեկատվության ժամանակակից տեխնոլոգիաներ,

- ծանոթանում է տեքստային, գրաֆիկական ու ցուցադրական նյութերի ձևակերպման գործող նորմատիվային պահանջներին:

Այսպիսով, ավարտական աշխատանքի պատրաստումը նպաստում է մագիստրոսին ժամանակակից արդյունաբերության պայմաններում, ձեռք բերել, խորացնել և ամրապնդել ինքնուրույն հետազոտական, նախագծային և փորձարարական աշխատանքներ կատարելու անհրաժեշտ հմտություններ:

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՉԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ: Մագիստրոսի ավարտական աշխատանքը բաղկացած է բացատրագրից և գրաֆիկական մասից:

1. Ավարտական աշխատանքի բացատրագիրը պետք է ներառի.

- ✓ վերլուծական,
- ✓ գիտահետազոտական,
- ✓ փորձարարական,
- ✓ նախագծային,
- ✓ հաշվարկային բաժիններ,

ինչպես նաև պետք է ունենա.

- ✓ եզրակացություն և
- ✓ օգտագործած գրականության ցանկ:

Ավարտական աշխատանքի բնույթից կախված բացատրագիրը կարող է չընդգրկել որոշ բաժիններ (օրինակ գիտահետազոտական, փորձարարական, հաշվարկային և այլն):

Ավարտական աշխատանքի բացատրագրի կազմման ժամանակ պետք է պահպանել հետևյալ պահանջները.

- ✓ *ժամադր* նվազագույնը՝ 60 էջ (առանց հավելվածների),
- ✓ *տառատեսակը*՝ Times Armenian,
- ✓ *վերնագրերը*՝ մեծատառերով՝ 14 տառաչափ,
- ✓ *տեքստը*՝ 12 տառաչափով, տպված 1.5 ինտերվալով:

Բացատրագիրը պետք է կազմված լինի հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներից որևէ մեկով:

2. Գրաֆիկական մասին ներկայացվող պահանջները.

- ✓ A-1 ձևաչափի՝ 6 թերթ, նվազագույնը (բացի «Ճարտարապետություն և դիզայն» մասնագիտությունից),
- ✓ ձևակերպումը՝ գործող ստանդարտների պահանջների համաձայն:

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋ-ՆԵՐԸ: Պաշտպանության թույլատրված շրջանավարտը պետք է ներկայացնի.

- ✓ ավարտական աշխատանքը (էլեկտրոնային տարբերակի հետ),
- ✓ գիտական ղեկավարի կարծիքը,
- ✓ գրախոսի դրական եզրակացությունը,
- ✓ ավարտական աշխատանքին վերաբերվող
 - հրապարակված հոդված (ներ)ը,
 - ցուցադրական նյութերը:

Ծանոթություն: Ավարտական աշխատանքի պաշտպանությունից առնվազն 5 օր առաջ, բուհի հայտարարությունների ցուցատախտակում, անհրաժեշտ է փակցնել.

- ✓ աշխատանքի հեղինակի (շրջանավարտի) ազգանունը, անունը, հայրանունը,
- ✓ թեմայի անվանումը,
- ✓ պաշտպանության օրը, ժամը և լսարանի համարը:

Նկ. 3-ում պատկերված է մագիստրոսի ավարտական աշխատանքի տիտղոսաթերթի ձև:

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

(Ֆակուլտետ)

(Մասնագիտություն)

ԹԵՄԱ՝ « _____
_____ »

ԽՈՒՄԲ՝ _____

ՈՒՍԱՆՈՂ՝ _____
(Ստորագրություն)

_____ (Ազգանուն, Ա.Հ.)

ՂԵԿԱՎԱՐ՝ _____
(Ստորագրություն)

_____ (Ազգանուն, Ա.Հ.)

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ Է ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

_____ (Ամբիոնի անվանումը)

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝ _____
(Ստորագրություն)

_____ (Ազգանուն, Ա.Հ.)

ԵՐԵՎԱՆ 20..

Նկ. 3. Մագիստրոսի ավարտական աշխատանքի տիտղոսաթերթ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գ.Կոշկարյան, Ա.Մարտիրոսյան, Ն.Հակոբյան, Գ. Իվանյան: Բոլոնիայի գործընթացը, TEMPUS ծրագիրը և բարեփոխումների ընթացքը ՀՀ բարձրագույն կրթության համակարգում. - Եր.: ԵՃՇՊՀ, 2010. - 20 էջ:
2. Յու Սարգսյան, Ա. Բուդաղյան: Բոլոնիայի գործընթացը Հայաստանում: Ուղեցույց. Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոն.- Եր.: Անտարես, 2008.-74 էջ:
3. Յու. Մարմարյան, Գլեն Շին, Գերի Բրայերս, Իննա Գալոյան: Բոլոնիայի գործընթացի նպատակները. - Եր.: ՀՊԱՀ, 2007. – 220 էջ:
4. Գ.Կոշկարյան, Ն.Հակոբյան: Մասնագիտության կրթության որակի ապահովման հիմնախնդիրները. - Եր.: ԵՃՇՊՀ, 2010. - 36 էջ:

ԲՈՒՈՆԻԱՅԻ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑ ԵՐԿՐՆԵՐ

I. Անդամ երկրներ

Ադրբեջան	Իսլանդիա	Հունաստան	Ուկրաինա
Ալբանիա	Իսպանիա	Հունգարիա	Չեխիա
Անդորրա	Իտալիա	Մալթա	Պորտուգալիա
Ավստրիա	Լատվիա	Մեծ Բրիտանիա	Ռումինիա
Բելգիա	Լեհաստան	Մոլդովա	Ռուսաստան
Բոսնիա և Հերցեգովինա	Լիխտենյնշտեյն	Մոնտենեգրո	Սերբիա
Բուլղարիա	Լիտվա	Հոլանդիա	Սլովակիա
Գերմանիա	Լյուքսեմբուրգ	Մակեդոնիա	Սլովենիա
Դանիա	Խորվաթիա	Նորվեգիա	Վատիկան
Էստոնիա	Կիպրոս	Շվեդիա	Վրաստան
Թուրքիա	Հայաստան	Շվեյցարիա	Ֆինլանդիա
Իռլանդիա			Ֆրանսիա

II. Անդամության թեկնածու երկրներ

Իսրայել	Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետություն
Կոսովո	Գրրղաստան

III. Գործընկեր-երկրներ

Ալժիր	Եգիպտոս	Դազախստան
Մարոկկո	Հորդանան	Թուրքմենիստան
Թունիս	Պաղեստինյան Ինքնավարություն	Ուզբեկիստան
Լիվիա	Լիբանան	Տաջիկիստան

Հավելված 2

ՀԱՍՏԱՎԱԾ Է
ՀԱՄԱՍՄԱՐԱՆԻ ԳԻՏՈՒՄ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՌԵԿՏՐ
Հ.Վ.ԹՈՔՍԵՅՅԱՆ
«_» _____ 20 թ.

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՃԱՐՏԱՐԱԿԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱՍՄԱՐԱՆ

Ճարտարապետության մագիստրոս
մասնագետի որակավորումը

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

«271500-Ճարտարապետություն և դիզայն»

Երկու տարի
ուսումնառության ժամկետը

ՍԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ	Առարկայի անվանումը	Կրեդիտների ըստ կրեդիտների	Կրեդիտներ ըստ կիսամյակների	Ստուգման ամփոփ ձևը					Ուսանողի աշխատանքի ծավալը (ժամ)					Բաշխումն ըստ կուրսերի և կիսամյակների								
				Քննություն	Ստուգաքննություն	ԿՆ	ԿԱ	ՀԳԱ	Ընդամենը	Լսարանային			Ինքն.աշխ.	Ամհատական աշխատանք	I կուրս		II կուրս					
										Ընդամենը	Գաախառ.	Գործն. և անմիջառ. Լսարանային			1կ	2կ	3կ	4կ				
				Շաբաթների քիվն ըստ կիսամյակների													16	16	16	16		
1. Հանրապետական քաղաքային																						
1.1	Օտար լեզու	6	3/3		1,2				180	64		64		116		0:2	0:2					
1.2	Գիտության տեսություն և գիտահետազոտական աշխատանքների մեթոդաբանություն	3	3		1				90	16	16			74		1:0						
1.3	Ֆիզիկական դաստիարակություն				1,2				96		96				0:3	0:3						
Գ-ումարը		9	9		3				180	80	0	64	0	116	0	6	6	5	3			
2. Պարտադիր առարկաներ																						
2.1	Նորագույն (արտերկրների և հայկական) ճարտարապետությունը և նրա զարգացման հիմնական ուղղությունները	2	2		3				60	32	32			28				2:0				
2.2	Քաղաքաշինություն և լանդշաֆտ: Խոշորագույն քաղաքների հիմնախնդիրները	2	2	3					60	32	32			28				2:0				
2.3	Քաղաքաշինություն և տրանսպորտ	2	2	2					60	16	16			44			1:0					
2.4	Քաղաքաշինություն և էկոլոգիա	2	2		1				60	16	16			44		1:0						
2.5	Կայուն քաղաքաշինություն և ճարտարապետություն	2	2	2	3				60	16	16			44				1:0				
2.6	Քաղաքաշինության և ճարտարապետության իրավական հենք	2	2	2					60	32	32			28			2:0					
2.7	Ճարտարապետության նորագույն կոնստրուկտիվ համակարգեր	4	3/1	1	2				120	48	48			72		2:0	1:0					
2.8	Բնակելի, հասարակական շենքերի նոր տիպերի ձևավորում և նախագծում	5	2/3	1	2				150	48	48			102		1:0	2:0					
2.9	Ճարտարապետական միջավայրի դիզայնը և նրա զարգացման ուղիները	3	3		1				90	32	32			58		2:0						
2.10	Ճարտարապետության տեսության զարգացումը և ճարտարապետական նախագծման մեթոդաբանություն	4	2/2	2,3					120	48	48			72			1:0	2:0				
2.11	Մշակույթային և բնության ժառանգություն, պատմական քաղաքների, ճարտարապետական հուշարձանների վերակառուցում	3	3	1					90	32	32			58		2:0						
2.12	Սեյսմակայուն շենքերի ճարտարապետական նախագծում	2	2		2				60	16	16			44		1:0						
2.13	Գիտահետազոտական աշխատանք	4	3/1		3,4				120	0				120				Գ.Ա	Գ.Ա			
2.14	Մագիստրոսի անհատական պարապմունք դեկավարի հետ և ավարտական աշխատանքի կատարում	28	8/10/10	1,2,3					840	144		144		646	50	0:3	0:3	0:3				
Գ-ումարը		65	65	12	9				1950	512	368	144	0	1388	50	11	21	11	22	10	21	31
3. Մասնագիտական կրթամաս																						
3.1	Ճարտարապետական հուշարձանների վերականգնման մեթոդիկա	2	2	3					60	32	32			28				2:0				
3.2	Ճարտարապետական հուշարձանների վիճակագրություն և հնագիտություն	2	2		2				60	16	16			44			1:0					
3.3	Քաղաքաշինության էկոնոմիկա	3	3	1					90	32	32			58		2:0						
3.4	Քաղաքաշինությունն արտակարգ իրավիճակներում	2	2		2				60	16	16			44		1:0						
3.5	Միջավայրի տարրերը և հարդարման նյութեր	3	3	3					90	32	32			58				2:0				
3.6	Բազմահարկ շենքերի նախագծման առանձնահատկությունները	2	2		3				60	16	16			44				1:0				
Գ-ումարը		14	14	3	3				150	48	48	0	0	102	0	2	3	2	4	5	7	31
Ընդամենը		88	88	15	15	0	0	0	2280	640	416	208	0	1606	50	19	30	18	29	15	28	31
Քննություններ				15											5	5	5					
Ստուգաքննություններ				15											5	7	4			1		
Կուրսային նախագիծ																						
Կուրսային աշխատանք																						
Կուրսային աշխատանք																						
Պրակտիկաներ (շաբաթներով)																						
Արտադրական		1														1	1					
Նախաապրտական		1																		1	1	
Ավարտական աշխատանք		30																				
Կրեդիտների գումարը		120														30	30	28		32		

1- Գիտահետազոտական աշխատանքի պաշտպանությունը կատարվում է 4-րդ կիսամյակի 6-րդ շաբաթում

2- 14 կետում հատկացված անհատական աշխատանքի 50 ժամը նախատեսված է 4-րդ կիսամյակում ավարտական աշխատանքի կատարման համար

ՀԱՄԱՏԱՎԱԾ Է
ՀԱՄԱՍՄԱՐԱՆԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՈՒՆԿՏՈՐ ՀՎԹՈՔՄԱՅՅՅԱԼ
«___» _____ 20 թ.

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՎՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՆԼԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱՍՄԱՐԱՆ

Ճարտարագիտության մագիստրոս
մասնագետի որակավորումը


ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ
ՍՄԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ «270100-Շինարարություն, շինարարական իրերի և կառուցվածքների արտադրություն»


Մասնագիտացում ա) Արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն
բ) Շինարարական իրերի և կոնստրուկցիաների արտադրություն

Երկու տարի
ուսումնառության ժամկետը

ՀՀ	Առարկայի անվանումը	Կրթիչների քանակը	Կրթիչներ ըստ կիսամյակների	Ստուգման ամփոփ ձևը					Ուսանողի աշխատանքի ծավալը (ժամ)					Բաշխումն ըստ կուրսերի և կիսամյակների							
				Քննություն	Ստուգաթղթեր	ԱՆ	ՊՆ	ՄԳՆ	Ընդամենը	Լսարանային				Ինքն. աշխ.	Ամիսատեղի աշխատանք	I կուրս		II կուրս			
										Ընդամենը	Գործն. և ակադեմ. Լսարանային	Բն. աշխ.	Ամիսատեղի աշխատանք			1 կուրս	2 կուրս	3 կուրս	4 կուրս		
				16	16	16	16	Ընդամենը				Ընդամենը									
1. Հանրապետական քաղաքիչ													Ընդամենը								
1.1	Օտար լեզու	6	3/3		1.2			180	64		64		116		0:2	0:2					
1.2	Գիտության տեսություն և գիտահետազոտական աշխատանքների կատարման մեթոդագիտություն	3	3		1			90	32	32			58		2:0						
1.3	Ֆիզիկական դաստիարակություն				1.2			96		96					0:3	0:3					
	Գումարը	9	9		5			270	96	32	64	0	174	0	7	6	5	3			
2 Պարտադիր առարկաներ													Ընդամենը								
2.1	Համակարգչային տեխնոլոգիաները գիտության և կրթության բնագավառում	7	7	1			1	210	64	16	48		146		1:3						
2.2	Մաթեմատիկ: Հատուկ դասընթաց	7	7	1				210	64	32	32		146		2:2						
2.3	Շին. արտադրության նորագույն տեխնոլոգիաներ և մեխանիկա-գիտական մեթոդներ	5	3+2	3		3		150	48	32	16		102				2:1				
2.4	Շին. էկոնոմիկա և կառավարում	3	2+1		3		3	90	32	32			58				2:0				
2.5	Կառուցվածքների դինամիկա և կայունություն	2	2	2				60	32	32			28			2:0					
2.6	Գիտահետազոտական աշխատանք	4	3/1		3.4			120					120				Գ.Ա	Գ.Ա			
2.7	Շին. կոնստրուկցիաների հաշվարկի և կոնստրուկցիաների մեթոդները	6	3/3	2	3			180	128	64	64		52			2:2	2:2				
2.8	Մագիստրոսի անհատական պարամետրը ղեկավարի հետ և ավարտական աշխատանքի կատարում	28	8/10/10	1,2,3		2,3	1	840	112		112		688	40	0:2	0:2	0:3				
	Գումարը	62	62	8	4	3	2	1860	480	208	272	0	1340	150	10	22	8	15	12	24	31
3.ա Ընտրյալ առարկաներ													Ընդամենը								
5.1.ա	Առաջնական դասարանի և պլաստիկության տեսություն	4	4	1			1	120	48	32	16		72		2:1						
5.2.ա	Սեյսմակայուն շինարարություն	4	4	3			3	120	48	32	16		72				2:1				
5.3.ա	Շենքերի և շինությունների տեխնիկական վերակառուցում և արդիականացում	5	5	2				150	48	32	16		102			2:1					
5.4.ա	Ճարտարապետա-շինարարական ֆիզիկայի հատուկ դասընթաց	4	4		2			120	32	32			88			2:0					
	Գումարը (ա)	17	17	3	1	1	1	510	176	128	48	0	334	0	3	4	5	9	3	4	31
3.բ Ընտրյալ առարկաներ													Ընդամենը								
5.1.բ	Կապակցող նյութերի քիմիա	4	4		1			120	48	32		16	72		2:0:1						
5.2.բ	Ճարտարապետա-շինարարական նյութագիտություն	5	5	2				150	48	32	16		102			2:1					
5.3.բ	Շինարարական նյութերի, իրերի և կոնստրուկցիաների տեխնոլոգիա	4	4	3			3	120	48	32	16		72				2:1				
5.4.բ	Շին. նյութերի, իրերի և կոնստրուկցիաների հուսալիություն, էֆեկտիվություն և էյոլոգիական անվտանգություն	4	4		2			120	32	32			88			2:0					
	Գումարը (բ)	17	17	2	2	1	1	510	176	128	32	16	334	0	3	4	5	9	3	4	31
	Ընդամենը (ա)	88	88	11	10	3	3	2640	752	368	384	0	1848	150	20	32	18	27	15	28	31
	Ընդամենը (բ)	88	88	10	11	3	3	2640	752	368	368	16	1848	150	20	32	18	27	15	28	31
	Քննություններ (ա)			11											4	4	3				
	Քննություններ (բ)			10											3	4	3				
	Ստուգաթղթեր (ա)				10										3	3	3	1			
	Ստուգաթղթեր (բ)				11										4	3	3	1			
	Կուրսային մախացիծ (ա)															1	2				
	Կուրսային մախացիծ (բ)					3										1	2				
	Կուրսային աշխատանք (ա)						3								1		2				
	Կուրսային աշխատանք (բ)						3								1		2				
	Պրակտիկաներ (շաբաթներով)																				
	Արտադրական		1													1	1				
	Նախաամսադրական		1																1	1	
	Ավարտական աշխատանք		30																		
	Կրթիչների գումարը	120													32	28	28	32			

1- Գիտահետազոտական աշխատանքի պաշտպանությունը կատարվում է 4-րդ կիսամյակի 6-րդ շաբաթում
2- 8 կետում հատկացված ղեկավարի անհատական պարամետրը մախատեսված է 4-րդ կիսամյակում ավարտական աշխատանքի կատարման համար





ԵՐԵՎԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱԳԻՍՏՐՈՍՍԱԿԱՆ ԿԹՈՎԱՆ ԾՐԱԳՐԻ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՓԱՍՆԱԿԱՑՈՒՅՑ

Մասնագիտությունը.

«270100-Շինարարություն, շինարարական իրերի և կառուցվածքների արտադրություն»

Մագիստր		Պարտադիր		Վերականգնողական		Մասնագիտական		Գործունեության հարկում		Քաղաքացիական		Միջազգային		Ընդամենը		
Ամսաթիվ	Միավոր	Ամսաթիվ	Միավոր	Ամսաթիվ	Միավոր	Ամսաթիվ	Միավոր	Ամսաթիվ	Միավոր	Ամսաթիվ	Միավոր	Ամսաթիվ	Միավոր	Ամսաթիվ	Միավոր	
1	8	15	22	5	12	20	15	2	3	10	17	24	1	8	15	22
2	7	14	21	28	12	19	26	1	9	16	23	30	7	14	21	28
3	6	13	20	19	11	18	25	1	8	15	22	29	7	14	21	28
4	5	12	19	28	11	18	25	1	8	15	22	29	7	14	21	28
5	4	11	18	25	11	18	25	1	8	15	22	29	7	14	21	28
6	3	10	17	24	11	18	25	1	8	15	22	29	7	14	21	28
7	2	9	16	23	11	18	25	1	8	15	22	29	7	14	21	28
8	1	8	15	22	11	18	25	1	8	15	22	29	7	14	21	28
9	1	8	15	22	11	18	25	1	8	15	22	29	7	14	21	28
10	1	8	15	22	11	18	25	1	8	15	22	29	7	14	21	28
11	1	8	15	22	11	18	25	1	8	15	22	29	7	14	21	28
12	1	8	15	22	11	18	25	1	8	15	22	29	7	14	21	28
13	1	8	15	22	11	18	25	1	8	15	22	29	7	14	21	28
14	1	8	15	22	11	18	25	1	8	15	22	29	7	14	21	28
15	1	8	15	22	11	18	25	1	8	15	22	29	7	14	21	28
16	1	8	15	22	11	18	25	1	8	15	22	29	7	14	21	28
17	1	8	15	22	11	18	25	1	8	15	22	29	7	14	21	28
18	1	8	15	22	11	18	25	1	8	15	22	29	7	14	21	28
19	1	8	15	22	11	18	25	1	8	15	22	29	7	14	21	28
20	1	8	15	22	11	18	25	1	8	15	22	29	7	14	21	28
21	1	8	15	22	11	18	25	1	8	15	22	29	7	14	21	28
22	1	8	15	22	11	18	25	1	8	15	22	29	7	14	21	28
23	1	8	15	22	11	18	25	1	8	15	22	29	7	14	21	28
24	1	8	15	22	11	18	25	1	8	15	22	29	7	14	21	28
25	1	8	15	22	11	18	25	1	8	15	22	29	7	14	21	28
26	1	8	15	22	11	18	25	1	8	15	22	29	7	14	21	28
27	1	8	15	22	11	18	25	1	8	15	22	29	7	14	21	28
28	1	8	15	22	11	18	25	1	8	15	22	29	7	14	21	28
29	1	8	15	22	11	18	25	1	8	15	22	29	7	14	21	28
30	1	8	15	22	11	18	25	1	8	15	22	29	7	14	21	28
31	1	8	15	22	11	18	25	1	8	15	22	29	7	14	21	28
32	1	8	15	22	11	18	25	1	8	15	22	29	7	14	21	28
33	1	8	15	22	11	18	25	1	8	15	22	29	7	14	21	28
34	1	8	15	22	11	18	25	1	8	15	22	29	7	14	21	28
35	1	8	15	22	11	18	25	1	8	15	22	29	7	14	21	28
36	1	8	15	22	11	18	25	1	8	15	22	29	7	14	21	28
37	1	8	15	22	11	18	25	1	8	15	22	29	7	14	21	28
38	1	8	15	22	11	18	25	1	8	15	22	29	7	14	21	28
39	1	8	15	22	11	18	25	1	8	15	22	29	7	14	21	28
40	1	8	15	22	11	18	25	1	8	15	22	29	7	14	21	28
41	1	8	15	22	11	18	25	1	8	15	22	29	7	14	21	28
42	1	8	15	22	11	18	25	1	8	15	22	29	7	14	21	28
43	1	8	15	22	11	18	25	1	8	15	22	29	7	14	21	28
44	1	8	15	22	11	18	25	1	8	15	22	29	7	14	21	28
45	1	8	15	22	11	18	25	1	8	15	22	29	7	14	21	28
46	1	8	15	22	11	18	25	1	8	15	22	29	7	14	21	28
47	1	8	15	22	11	18	25	1	8	15	22	29	7	14	21	28
48	1	8	15	22	11	18	25	1	8	15	22	29	7	14	21	28
49	1	8	15	22	11	18	25	1	8	15	22	29	7	14	21	28
50	1	8	15	22	11	18	25	1	8	15	22	29	7	14	21	28

- Տեսական ուսուցում
- Ավարտական աշխատանքի կատարում և պաշտպանություն
- Արտադրական պրակտիկա
- Բնագիտական
- Լաբորատորական պրակտիկա
- Արհեստագործական
- Արհեստագործական պրակտիկա

ՈՍԱՆՈՂԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԱՂՅՈՒՄԱԿ

«5» միավորանոց համակարգ		Եվրոպական կրեդիտային համակարգ (ECTS)				20 միավորանոց (բալանոց) համակարգը	ՀԵՇՊՀ 20 միավորանոց համակարգը
Գնահատականը	Թվանշանը	Տառային		Թվանշանը	Ռեյտինգային միավորը		
		Միավոր	Ծշտվածը				
Գերազանց	5	A	A ⁺	4,0	95-100	18-20	20
			A	4,0	87-94		19
			A ⁻	3,7	81-86		18
Լավ	4	B	B ⁺	3,3	75-80	14-17	17
			B	3,0	67-74		15-16
			B ⁻	2,7	61-66		14
Բավարար	3	C	C ⁺	2,3	55-60	8-13	12-13
			C	2,0	46-54		10-11
			C ⁻	1,7	40-45		8-9
Անբավարար*			D		< 40	< 8	< 8
Չներկայացած*	«Չն.»		F			«Չն.»	«Չն.»
Ստուգված			S		≥ 40	≥ 8	≥ 8
Չստուգված*			U		< 40	< 8	< 8
Անավարտ*			J				
Դասընթացի բացթողում*			W				

* - նշագրումը չի կատարվում



Տպագրության եղանակը՝ ռիզոգրաֆիա:

Թուղթը՝ օֆսեթ, 80 գր:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:

Ստորագրված է տպագրության 17.09.2011թ.:

Պատվեր թիվ 212: Տպաքանակը՝ 101 օրինակ:

Տպագրված է Երևանի ճարտարապետության և
շինարարության պետական համալսարանի
տպագրության և լրատվության կենտրոնի տպարանում:

Հասցե՝ Երևան, Տերյան 105:

